ԺԱ. ՏԱՐԻ — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 28 ՅՈՒՆԻՍ 1906—ՎԱՐՆԱ — ԹԻՒ 48

ՊԱՅՄԱՆՔ
ՊՈՒԼԿԱՐԻԱ
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 Ֆր.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Երկու թիւը մէկ ծրարով
Տարեկան ... 14 Ֆր.
Վեցամսեայ ... 7 Ֆր.
ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 Տոլար
Վեցամսեայ 1.50 »
ԿԱՆԽԻԿ.
Ծանուցման տողը 20 սանթիմ

# ԻՐԱՒՈՒՆՔ

ԼՐԱԳԻՐ
ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԷ
Rédaction du journal „Iravounk"
VARNA (Bulgarie)
Редакция на вѣстникъ „Иравунк"
ВАРНА
Գրութիւնք ետ չեն տրուիր

## ՀԱՇՏ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

### Ա.

Թուրքին հետ հաշտ քաղաքականութեան մը հետեւելու եւ կամ Սուլթանին հետ հաշտուելու առաջարկը՝ զոր Տօք. Գաբրիէլեան ներկայացուցած էր հայ ժողովուրդին իր «Հայկական ճգնաժամն եւ վերածնութիւն» գիրքով, այս անգամ Ա. Արփիարեան եւ Շիրակով կերկրորդէ մի քիչ սկեպտիկօրէն ու կը յաւելու «Ուստի փափաքելի էր որ տօք. Գաբրիէլեան Ամերիկա իրեն գաղափարակիցներու խումբ մը կազմելէ յետոյ, աշնան Եւրոպա եւ Եգիպտոս անցնէր, ընդանուր խորհրդակցութեան մը համար իր առաջարկներուն վրայ։ Խաղաղասիրական քաղաքականութիւն մը մեր ազգային շահերը կը նպաստաւորէ՞ թէ ոչ....»

Ի բաց առեալ արտասահմանի յեղափոխական աննշան փոքրամասնութեան պոռչտուքները, Թուրքիոյ մէջ հայ ժողովուրդը 7-8 տարիէ ի վեր իր գլուխը ունենալով Օրմանեան պատրիարքը Թուրքին եւ Սուլթանին հետ ոչ թէ միայն հաշտ քաղաքականութեան մը հետեւած է, այլ նոյնիսկ ամենախոնարհ ու գետնաքարշ գերիներու համակերպումը ունեցած է, իր գլուխին զարնուած բոլոր լախտի հարուածներուն առթիւ Սուլթանին արեւշատութիւն մաղթելով. Տօք. Գաբրիէլեան եւ բոլոր իրեն պէս խորհողները կարծեմ իրենք ալ չեն կրնար երեւակայել Օրմանեանի եւ իր արբանեակներուն հետեւած թրքահաճոյ քաղաքականութեան հաւասարող «Հաշտ քաղաքականութիւն մը» զոր կարող ըլլայ հայ ազգը իր ամբողջութեամբ կամ մեծամասնութեամբ որդեգրել ո՛եւէ ժամանակ։ Օրմանեան յանուն ամբողջ Թրքահայութեան իր բոլոր քծնումներով՝ համակերպումներով կրցա՞ւ մեղմացում մը յառաջ բերել Թրքահայութեան դժոխք դարձած կեանքին մէջ։ Ո՛չ, երբէք. այլ ընդհակառակը, Սուլթանը ի հարկին խմբական կոտորածներ ալ հրաման ընելէ զատ, լուռ մնջիկ ու ամենայն կանոնաւորութեամբ կը հետեւի քառորդ դարէ ի վեր իր գծած հայաջինջ ծրագրին, զոր յաջողած ըլլալով ցարդ կիսով չափ իրականացնել, դեռ կը շարունակէ ամբողջացնել, հայկական գաւառները ու գիւղերը Հայերէ դատարկելով եւ անոնց տեղերը մահմետական տարրերու տալով եւ զանոնք ամեն բանէ զրկելով։

Եւ Օրմանեան իր թրքասէր քաղաքականութեամբ հայ ժողովուրդը մազի չափ չը կրնալ պաշտպանելէ զատ, հայ քահանայ մը կամ վարդապետ մը մէկ քաղաքէ ուրիշ քաղաք մը ղրկելու արտօնութիւն մը իսկ չէր կրնար ձեռք բերել. եւ ալ աւելի ծիծաղելին կայ, Օրմանեան չը կըրցաւ գոնէ իր բնակած Պատրիարքարանին վրայ Սուլթանին վստահութիւնը գրաւել, որպէսզի քանի մը անգամ չը խուզարկուէր Թրքական պաշտօնատունի մը վերածուած այդ հաստատութիւնն ալ, բան մը որ չէր պատահած Ներսէս Վարժապետեանի եւ Իզմիրլեանի պատրիարքութեան օրերուն երբ այդ պատրիարքարանը առնաբար կռիւ կը մղէր նոյն Սուլթանին դէմ։

Եթէ կարժէ որ փորձերէն խըրատուինք, հայ ազգը Թուրքին հետ հաշտ ապրելու քաղաքականութեան հրաւիրելը զայն յուսախաբութեան մղել է ըստ մեզ, ցորչափ Կ. Պոլսոյ գահուն վրայ կը նստի Սուլթան Համիտ մը կամ նոյն հայեացքները ունեցող ուրիշ Թուրք մը։ Եւ պէտք չէ երբեք մեր յիշողութենէն վրիպի Թրքական կեղծիքը, զոր անպատկառօրէն գործածելէ չեն քաշուիր օսմանեան գահակալները. «Թուրքին բարեկամութիւնը չըլլար կըսէ մեր ժողովրդական առածը. «գըշ կիւնիւնիւն խօշլըղանա, Օսմանլընըն տօսթլըղընա էմնիյէթ օլընմազ» կըսէ նոյնիսկ Թիւրքերէն առած մը։

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

### ԵՕԹՆԵԱԿ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

### Զ.

Բայց Դաշնակցութենէն ծագելիք ամենամեծ բարիքը ազգային եւ մտաւորական բարեկարգութիւնը պիտի ըլլայ։

Աշխարհի տակաւին յոռի անիշխանութեան մը մէջ գտնուելուն հակառակ, կան կառավարութիւններ որոնք կապահովեն առաւել կամ նուազ չափով անհատական իրաւունքները։ Օրինակի համար, Անգլիան այդ պարագային մէջ է։ Բայց հասարակութիւններու համար, ոչ մէկ տեսակ ապահովութիւն չէ ստեղծուած։ Այսպէս իւրաքանչիւր Բոլոնացի, անհատապէս, կրնայ մի քիչ պաշտպանութիւն գտնել բրուսական դատարաններու առջեւ երբ Գերմանացի մը իրեն դէմ զրկանքներ գործէ։ Սակայն երեք միլիոն Բոլոնացիք Բօզէնի նահանգին մէջ, հաւաքաբար առնելով չունին ոչ մէկ ապահովութիւն այն աւելի մեծ զրկանքներուն դէմ զորս բռուսական կառավարութիւնը կրնայ ի գործ դնել։ Բոլոնացիք 16 երեսփոխաններ կը ղրկեն Ռէյխշթակին։ Անոնք կը գտնուին 370 գերմանացի երեսփոխաններու դիմաց, որոնք աթոռներ կը գրաւեն այդ ժողովին մէջ։ Հունգարիոյ մէջ ալ յիւտէնները նոյնն են։ Այլեւս չեմ խօսիր ինքնակալական երկիրներու մասին, ինչպէս Ռուսիա, ուր հպատակ ժողովուրդներու համար ապահովութեան մը ստուերը չը կայ. ոչ ալ, արդէն, իշխող ժողովուրդին համար։

Մեր ապրած անիշխանական շրջանին մէջ իւրաքանչիւր Պետութիւն իրեն նպատակակէտ ունենալով դրացիին գաւառները գրաւել ու իրենները չը կորսընցնել, կուզէ կարելի եղածին չափ զօրաւոր ըլլալ։ Ինչպէս կառավարութիւնները պարզմտութիւնը ունին կարծելու թէ իրաւունք ունին ուժի զօրութեամբ երկրի վրայ տարածուելու, բնակիչներու վրայ իշխելու, նոյնպէս ալ ամենագէշ գործ կը նկատեն նահանգ մը կորսնցնելը։ Աւելորդ է հոս յիշել թէ պատմական բազմաթիւ պարագաներու բերմամբ, շատ մը պետութիւններ կազմուած են շատ այլացեղ եւ յաճախ իրարու հակառակորդ ազգերէ։ Այդ գէշ կազմուած Պետութիւնները, մեծապէս պիտի օգտուէին, եթէ տարրալուծուէին, որպէսզի ժողովուրդը կարենային համախմբուել իրենց ճշմարիտ ցեղակցութեան համաձայն։

Երբ ամեն մէկ ազգութիւն իրեն անջատ պետութիւնը կազմէ այն ատեն միայն մարդկային ընկերութիւններու քաղաքական կազմակերպութիւնը իր զարգացման գագաթնակէտին պիտի հասնի։ Պէտք է որ մեր բոլոր ուժերովը ձգտինք դէպի իտէալը ինքնավար ազգերու Դաշնակցութեան մը։ Միայն բռնութիւնը արգելք եղաւ ցարդ այս իտէալին իրականացմանը։ Բայց երբ մարդկային ցեղը կազմակերպուի իրաւախոհական դաշնակցութեամբ մը, ոչ մէկ վեհապետ, ոչ մէկ ժողովուրդ ամենադոյզն անհանգստութիւն մը չպիտի ունենայ միջազգային ապահովութեան տեսակէտով։ Այն ատեն անտարբեր պիտի ըլլայ Պետութիւններու մեծ կամ փոքր ըլլալու մասին, քանի որ ապահովութիւնը կատարեալ եւ անթերի պիտի ըլլայ բոլորին համար։ Յայնժամ քիլոմէթրական յիմարութիւնը վերջ պիտի գտնէ եւ պիտի ըմբռնուի թէ բոլորին մեծապէս օգտակար է ազատ ձգել ազգերը որ իրենք համախմբուին իրենց մտաւոր յարմարութեան կամ ցեղակցութեան համեմատ։ Երբ այս բարեբաստ վայրկեանը հասնի, մարդկային երջանկութեան չափը անհագին համեմատութեամբ մը պիտի բարձրանայ։

Այդ կարգադրութիւնը երբ ըլլայ, պետութիւններու սահմանները պիտի բարեփոխուին օրի-

